ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 175 –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 134-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ, 19.1-րդ կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի դ) և ե) կետերով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածներով, <<Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում համայնքի կողմից մատուցվող աղբահանության ծառայության դիմաց գանձվող տեղական վճարների 2015 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 06-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2014 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> N 134-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան		
Ա. Բաղեյան		
Ա. Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ. Կարապետյան		

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 176 –Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ 4 –ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 24/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԼԻԱՆԱ ԵՐԵՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել Լիանա Երեմի Հակոբյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Հաղթանակի 50 հասցեում գտնվող շենքի գույքահարկի տույժի գումարի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով (դիմումը՝ քաղաքապետարանում մուտքագրված 2014 թվականի նոյեմբերի 27-ի N12195 թվագրմամբ):

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 822-ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել արտոնություն Լիանա Երեմի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հաղթանակի 50 հասցեում գտնվող շենքի գույքահարկի տույժի գումարի վճարման նկատմամբ, ազատելով 185338 (մեկ հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր երեսունութ) դրամ գումարի վճարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**

Գ. Ադամյան _____

Ա. Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Կարապետյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 177 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ կատարելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» N 1283-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրու քաղաքապետարանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի աշխատավայրից դուրս ամուսնությունների պետական գրանցումների համար մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարը սահմանել 25.000 (քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան		
Ա. Բաղեյան		
Ա. Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ. Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ. Հունանյան		

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.

Հավելված

Գյումրի համայնքի ավագանու

2014թվականի դեկտեմբերի 12-ի

N 178-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ 2013 թ. ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՍՏԱՑՈՂ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ

h/h	Մարզադպրոցների անվանումը	Մարզիչների Անուն,Ազգանուն	Պարգևի չափը	Հաշվի համար
1.	Քաղաքապետարանի <<Ա. Սարգսյանի անվ. Համալիր մարզադպրոց>	Գագիկ Վարդանյան	30.000դրամ	1810005597220100
2.	Հունա-հռոմեական ըմբշամարտի մ/դպ	1.Գևորգ Ալեքսանյան 2.Մեսրոպ Սմբատյան 3.Անդրանիկ Գևորգյան 4.Արթուր Պետրոսյան 5.Աբրահամ Մխիթարյան 6.Թելման Սարգսյան 7.Հովհաննես Ղուդրադյան 8.Ռուբեն Նազարյան 9.Գևորգ Խեբոյան 10.Մկրտիչ Սմբատյան 11.Արտյոմ Պետրոսյան 12.Ռաֆայել Ալեքսանյան	240.000դրամ 36.000 դրամ 36.000 դրամ 120.000դրամ 30.000դրամ 30.000դրամ 180.000դրամ 24.000դրամ 30.000դրամ 18.000դրամ 36.000 դրամ 30.000դրամ	1930041880280100 1930013913690100 1930031968810300 1930041880690100 1930032689870100 1930041933170100 1930041880440100 1930041880510100 1930041917330100 1930041880850100 1930041880770100 1930041906440100
3.	Շախմատ	1.Մաթևոսյան Սեդրակ	18.000 դրամ	1930041752800100
4.	Սամբո-ձյուդոյի մ/դպ.	1.Ավետիսյան Հայկ	108.000դրամ	1810005460340300
		1.Գրիգորյան Երվանդ 2.Խաչատրյան Դավիթ 3.Գրիգորյան Էդուարդ 4.Հովհաննիսյան Գևորգ 5.Մեքինյան Սուրեն	90.000դրամ 72.000դրամ 30.000դրամ 30.000դրամ 48.000դրամ	1810005585830100 1810005586250100 1810005584010100 1810005528590100 1810005586820400
5.	Բռնցքամարտի մ/դպ	1. Հարությունյան Վաչիկ 2.Գաբրիյելյան Մանվել 3.Տեփանոսյան Հարություն 4.Պողոսյան Գառնիկ 5.Եգանյան Սեյրան	30.000դրամ 36.000դրամ 18.000դրամ 30.000դրամ 24.000դրամ	2050154581727001 2050156136697001 2050156126467001 2050154307007001 2050153982467001

6.	Աթլետիկայի մ/դպ	1.Ունուսյան Սամվել 2.Շմավոնյան Գայանե 3.Գասպարյան Լևոն 4.Բարսեղյան Գրիգոր	30.000դրամ 30.000դրամ 30.000դրամ 30.000դրամ	1930050694820100 2470021067780010 11500156131100 9051210205183787
7.	Հրաձգության Մարզադպրոց	1.Ջանոյան Ստեփան 2.Ղարիբյան Էդուարդ 3.Դավթյան Արտուշ	30.000դրամ 30.000դրամ 30.000դրամ	2470020657010000 2470020654790000 2470020654460000
8.	Յու. Վարդանյանի անվ. Ծանրամարտի մ/դպ.	1.Դանիելյան Արա 2.Մկրտչյան Արմեն 3.Հաշարյան Լյովա 4.Քյանդարյան Ալբերտ 5.Բիչախչյան Վահան 6.Առաքելյան վանիկ 7.Գրիգորյան Միրհան 8.Տոնոյան Նորայր	72.000դրամ 18.000դրամ 18.000դրամ 30.000դրամ 48.000դրամ 36.000դրամ 36.000դրամ 36.000դրամ	1810005678730100 1810005678990100 1810005438331200 1810005678400100 1810005657030100 1810005679230100 1810005677660100 1810005679070100
9.	Գյումրու համայնքի մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մ/դպ	1.Խաչատրյան Ռոբերտ 2. Խաչատրյան Արտուշ 3.Ալոյան Մկրտիչ 4.Սուքիասյան Եպրաքսիա 5.Սարգսյան Նարինե 6.Սիմոնյան Լալա 7.Հովսեփյան Արմինե 8.Ալագյոզյան Էդուարդ	18.000դրամ 30.000դրամ 18.000դրամ 30.000դրամ 48.000դրամ 48.000դրամ 48.000 դրամ 48.000դրամ	2050155961387002 2050152332457001 2050153767397001 2050156065077001 2050152611707001 2050154943187001 2050066102787002 2050153984107001
10.	Ազատ ոճի մարզադպրոց	1.Մինասյան Արտուշ 2.Չախմախչյան Արտավազդ 3.Գյոլեցյան Գոռ 4.Ավետիսյան Հակոբ 5.Պապոյան Մանվել	18.000դրամ 18.000դրամ 18.000դրամ 30.000դրամ 30.000դրամ	2470020118040000 2470020117620000 2470020121410000 2470020121660000 2470020122240000
11.	Քաղաքապետարանի Համալիր մ/դպ /լող/	1.Գյուլյան Ֆերդինանտ 2.Մխիթարյան Հրանտ 3. Գյուլյան Սարգիս 4.Սիմոնյան Տիգրան 5.Մելքոնյան Հովհաննես	30.000դրամ 36.000դրամ 30.000դրամ 30.000դրամ 30.000դրամ	1810005841750100 1810005842090100 1810005841670100 1810005841590100 1810005841830100

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2.436.000 ՀՀ դրամ

Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի

Ֆիզկուլտուրայի և սպորտի

բաժնի պետ՝ Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 178 -Ա

2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2013 թվականի ընթացքում աշխարհի, եվրոպայի և Հայաստանի Հանրապետության առաջնություններում առավել բարձր արդյունքների հասած գյումրեցի մարզիկների մի խումբ մարզիչներին խրախուսելու նպատակով և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. 2013 թվականի ընթացքում աշխարհի, եվրոպայի և Հայաստանի Հանրապետության առաջնություններում չեմպիոններ և մրցանակակիրներ պատրաստած գյումրեցի մարզիչներին շնորհել սպորտային պարգևներ 2.436.000 (երկու միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) «Սպորտային պարգևներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան		
Ա. Բաղեյան		
Ա. Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ. Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ. Հունանյան		

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս.ԲԱԼԱԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.

Հավելված
Գյումրի համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 12-ի
N 175-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում համայնքի կողմից մատուցվող աղբահանության ծառայության դիմաց գանձվող տեղական վճարների 2015 թվականի դրույքաչափերը

Կենցաղային աղբ			
h/h	Վճարողներ	Հաշվարկման եղանակը և մեթոդ	Նշումներ
1	Բազմաբնակարան շենքի բնակարան, հանրակացարան	համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեում հաշվառում ունեցող յուրաքանչյուր բնակչի հաշվարկով ամսական 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ:	
2	Բնակելի տներ առանց հողամասի	համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեում հաշվառում ունեցող յուրաքանչյուր բնակչի հաշվարկով ամսական 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ:	
3	Բնակելի տներ տնամերձ հողամասով	համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեում հաշվառում ունեցող յուրաքանչյուր բնակչի հաշվարկով ամսական 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ գումարած բնակելի մակերեսից բացի յուրաքանչյուր 1 քառ. մետր հողամասի համար լրացուցիչ 1 (մեկ) ՀՀ դրամ:	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 3000 քմ հողամասն ամսեկան առաջացնում է առնվազն 1 խմ ոչ կենցաղային աղբ:
Ոչ կենցաղային աղբ, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համա			
4	Խանութ (մթերային, տնտեսական և կենցաղային քիմիայի ապրանքներ վաճառող)	մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող խանութի համար 3000 (երեք հազար) ՀՀ դրամ, 50 քմ ընդհանուր մակերեսը գերազանցող ընդհանուր մակերես ունեցող խանութների դեպքում՝ գերազանցող յուրաքանչյուր 1 քմ-ի համար լրացուցիչ 40 (քառասուն) ՀՀ դրամ:	Հաշվարկված է, որ մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող սույն խմբին պատկանող խանութը ամսական առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ, իսկ 50քմ մակերեսն գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 75քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել լրացուցիչ 1խմ աղբ:

5	Շինանյութի խանութ, ծաղիկ-ծաղկեպսակի խանութ	մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող խանութի համար 4000 (չորս հազար) ՀՀ դրամ, 50 քմ մակերեսը գերազանցող ընդհանուր մակերես ունեցող խանութների դեպքում՝ գերազանցող յուրաքանչյուր 1 քմ-ի համար լրացուցիչ 50 (հիսուն) ՀՀ դրամ:	Հաշվարկված է, որ մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող սույն խմբին պատկանող խանութը ամսական առնվազն կարող է առաջացնել 1,35 խմ աղբ, իսկ 50քմ մակերեսն գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 60քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել լրացուցիչ 1խմ աղբ:
6	Այլ խանութներ (վերոնշյալ 4 և 5 կետերում չնշված)	մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող խանութի համար 2000 (երկու հազար) ՀՀ դրամ, 50 քմ ընդհանուր մակերեսը գերազանցող ընդհանուր մակերես ունեցող խանութների դեպքում՝ գերազանցող յուրաքանչյուր 1 քմ-ի համար լրացուցիչ 30 (երեսուն) ՀՀ դրամ:	Հաշվարկված է, որ մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող սույն խմբին պատկանող խանութը ամսական առնվազն կարող է առաջացնել 0,70 խմ աղբ, իսկ 50քմ մակերեսն գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 100քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել լրացուցիչ 1խմ աղբ:
7	Դեղատուն (բացառապես գործունեության ընթացքում առաջացող կենցաղային և ոչ կենցաղային աղբի համար, որն չի ներառում վնասակար թափոնները)	մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող դեղատան համար 3000 (չորս հազար) ՀՀ դրամ, 50 քմ ընդհանուր մակերեսը գերազանցող ընդհանուր մակերես ունեցող դեղատների դեպքում՝ գերազանցող յուրաքանչյուր 1 քմ-ի համար լրացուցիչ 50 (հիսուն) ՀՀ դրամ:	Հաշվարկված է, որ մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող դեղատունը ամսական առնվազն կարող է առաջացնել 1 խմ աղբ, իսկ 50քմ մակերեսն գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 60քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել լրացուցիչ 1խմ աղբ:
8	Վարսավիրանոց, գեղեցկության սրահ, կենցաղային իրերի վերանորոգման արհեստանոցներ, կոշկակարային արհեստանոցներ և այլ կենցաղային սպասարկում	500 դրամ/(մասնագիտական աշխատող)	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 6 մասնագիտական աշխատող յուրաքանչյուր ամիս կարող է առաջացնել առնվազն 1խմ աղբ:
9	Բենզալցակայաններ	1000 դրամ/խողովակ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 3 խողովակով սպասարկման արդյունքում մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջանալ 1խմ աղբ:

10	Գազալցակայաններ	1500 դրամ/խողովակ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 2 խողովակով սպասարկման արդյունքում մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջանալ 1խմ աղբ:
11	Ավտոտեխսպասարկման կայաններ	3000 դրամ/(սպասարկման կետ)	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր մեկ սպասարկման կետը մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջանալ 1խմ աղբ:
12	Հասարակական սննդի և զվարճանքի օբյեկտներ (ռեստորան, սրճարան, արագ սննդի օբյեկտներ, ճաշարան, բար, դիսկո-բար, գիշերային ակումբ, բիլիարդ, խաղային ատրակցիոններ և այլն)	մինչև 100(մեկ հարյուր) քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 4000 (չորս հազար) ՀՀ դրամ, 100 քմ մակերեսը գերազանցող ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների դեպքում՝ գերազանցող յուրաքանչյուր 1 քմ-ի համար լրացուցիչ 40 (հիսուն) ՀՀ դրամ:	Հաշվարկված է, որ մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտը ամսական առնվազն կարող է առաջացնել 1,35 խմ աղբ, իսկ 100քմ մակերեսն գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 75քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել լրացուցիչ 1խմ աղբ:
13	Հյուրանոցներ, մոթելներ	500 դրամ/սենյակ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 6 հատ սենյակը առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:
14	Առանձին գործող բաղնիքներ, շոգեբաղնիքներ	50 դրամ/քմ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 60 քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:
15	Գյուղատնտեսական ապրանքների շուկա	20 դրամ/քմ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 150 քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:
16	Տոնավաճառ	5 դրամ/քմ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 600 քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:
17	Բանկեր, վարկային կազմակերպություններ	50 դրամ/քմ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 60 քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:

18	Երկաթգծի կայարաններ, ավտոկայարաններ, օդանավակայան	5 դրամ/քմ (մակերեսը վերաբերվում է բացառապես շինություններին)	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 600 քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:
19	Գործարաններ, արտադրամասեր, արտադրական նշանակությամբ առանձնացված ստորաբաժանումներ (ցեխ, վերանորոգման կետ և այլն) բացառապես անվնաս արտադրական աղբի աղբահանության համար	մինչև 200քմ արտադրական կամ սպասարկման մակերես ունեցող օբյեկտների համար 9000 (ինն հազար) ՀՀ դրամ, 200քմ գերազանցող սպասարկման մակերես ունեցող օբյեկտների համար գերազանցող յուրաքանչյուր 1քմ-ի համար լրացուցիչ 10 (տաս) ՀՀ դրամ	Հաշվարկված է, որ մինչև 200 քմ արտադրական կամ սպասարկման մակերես ունեցող օբյեկտը ամսական առնվազն կարող է առաջացնել 3 խմ աղբ, իսկ 200քմ մակերեսն գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 300քմ արտադրական կամ սպասարկման մակերեսն առնվազն կարող է առաջացնել լրացուցիչ 1խմ աղբ:
20	Առանձնացված պահեստային տարածքներ	2 դրամ/քմ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 150 քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:
21	Թատրոններ, կինոթատրոններ	25 դրամ/նստատեղ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 120 նստատեղ առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ ամսական:
22	Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների ինչպես նաև պետական մարմինների առանձնացված գրասենյակներ, սպասարկման կենտրոններ, շահույթ չհետապնդող կազմակերպություններ, դրանց առանձնացված ստորաբաժանումներ և (կամ) գրասենյակներ	20 դրամ/քմ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 150 քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ ամսական:
23	ՈՒսումնական հաստատություններ, բացի դպրոցներից	3000 դրամ/հոսք	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր հոսք մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:

24	Առողջապահական հիմնարկներ, բացի առանձնացված ատամնաբուժարանները (բացառապես կենցաղային և ոչ կենցաղային աղբի, որն իր մեջ չի ներառում մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած թափոնները,	10 դրամ/քմ	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 300 քմ ընդհանուր մակերեսն առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ ամսական:
25	Ատամնաբուժարանները	մինչև 3 (երեք) հատ մասնագիտական աթոռ ունեցող ատամնաբուժարանների համար 2000 դրամ, երեք հատը գերազանցող աթոռ ունեցող ատամնաբուժարանների համար գերազանցող յուրաքանչյուր 1 աթոռի համար լրացուցիչ 250 դրամ	Հաշվարկված է, որ մինչև 3 հատ մասնագիտական աթոռ ունեցող ատամնաբուժարանները մեկ ամսվա ընթացքում կարող են առաջացնել առնվազն 0,75խմ աղբ, իսկ երեք հատ մասնագիտական աթոռն գերազանցելու դեպքում գերազանցող յուրաքանչյուր 12
26	Դպրոցներ՝ այդ թվում գիշերօթիկ	25 դրամ/(աշխատող և աշակերտ)	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 120 (մեկ հարյուր քսան) հոգի՝ աշխատող և աշակերտ, իրար հետ միասին մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:
27	Մասնագիտական դպրոցներ՝ երաժշտական, սպորտ և այլն	20 դրամ/(աշխատող և սան)	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 150 (մեկ հարյուր հիսուն) հոգի՝ աշխատող և սան, իրար հետ միասին մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:
28	Մանկապարտեզներ	30 դրամ/(աշխատող և երեխա)	Հաշվարկված է, որ յուրաքանչյուր 100 (մեկ հարյուր) հոգի՝ աշխատող և երեխա, իրար հետ միասին մեկ ամսվա ընթացքում առնվազն կարող է առաջացնել 1խմ աղբ:
29	Շինարարական և խոշոր եզրաչափի աղբ առաջացնողներին աղբի աղբահանության թույլտվության համար	5000 դրամ/մեքենա	Անկախ մեքենայի բեռնատարողությունից

30	ՀՀ ԶՈՒ-ի և ՌԴ ԶՈՒ-ի զորամասեր և դրանց սպասարկող զինված ուժերի ենթակայության տակ գտնվող այլ կազմակերպություններ, հիմնարկներ, ստորաբաժանումներ	3000դրամ/խմ	Վճարների չափը՝ համաձայն կնքված պայմանագրերի, որի հաշվարկման հիմք է հանդիսանում փաստացի կատարված չափագրումները:

*Եթե աղբահանության վճար վճարողը նույն անշարժ գույքի տարածքում իրականացնում է իրարից տարբերվող գործունեություններ, որոնց համար սահմանված է աղբահանության վճարի հաշվարկման տարբեր եղանակներ և դրույքաչափեր, ապա գործունեության յուրաքանչյուր տեսակի համար հաշվարկվում է աղբահանության առանձին վճար:
**Եթե աղբահանության վճար վճարողը նույն անշարժ գույքի տարածքում՝ չառանձնացված սրահներով, իրականացնում է վերոնշյալ 4,5 և 6 կետերում նշված առևտրային գործունեություն, ապա աղբահանության վճարի հաշվարկման հիմք հանդիսացող հաշվարկային միավորը ձևավորվում է թվաբանական միջինի ստացման եղանակով: